ԶԱՎԵՆ ԽԱՌԱՏՅԱՆ

Զավեն Վահանի Խառատյանը ծնվել է 1952 թ. Թումանյանի շրջանի Շնող գյուղում։ 1970 թ. նա ընդունվում է Երևանի պետական

համալսարանի պատմության ֆակուլտետը, ուր հենց առաջին կուրսից, որպես մասնագիտություն, ընտրում է ազգագրությունը, որին էլ նվիրվում է մինչև կյանքի վերջին օրը։ 1975 թ., բարձր առաջադիմությամբ ավարտելով համալսարանը և ստանալով պատմաբան-ազգագրագետի որակավորում, պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ Զ. Խառատյանը երաշխավորվում է ասպիրանտուրայում շարունակելու իր ուսումնառությունը։

1975—1976 թթ. նա աշխատում է Ստեփանավանի շրջանի Ուռուտ գյուղի միջնակարգ դպրոցում՝ որպես պատմության և հասարակագիտության ուսուցիչ, ապա մեկնում Մոսկվա, ուր երեք տարի սովորում է ԽՍՀՄ ԳԱ ազգագրության ինստիտուտում՝ որպես ասպիրանտ։ 1981 թ. Մոսկվայում Զ. Խառատյանը պաշտպանում է թեկնածուական թեզ՝ «Կրոնական վերապրուկների կառուցվածքը և շարժընթացը հայոց ընտանեկան կենցաղում»։

1980 թ. Զ. Խառատյանը աշխատում է սկզբում Հայաստանի ազգագրության պետական թանգարանում՝ որպես գիտական աշխատանքների գծով փոխտնօրեն, ապա հրավիրվում է ՀՍՍՀ ԳԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ՝ որպես կրտսեր գիտաշխատող։ Հետագայում նույն ինստիտուտում նա ղրաղեցնում է գիտաշխատողի, այնուհետև ավագ գիտաշխատողի պաշտոնները։

Զ. Խառատյանի գիտական գործունեությունը նվիրված է եղել հայոց էթնամշակութային բազմազան հիմնահարցերի, հատկապես՝ հայ ժողովրդական հավատալիքների, ընտանեկան ու հասարակական ծիսակարգի, Հայաստանի առանձին պատմամշակութային շրջանների (Արցախ, Տավուշ) ուսումնասիրությանը։

Զ. Խառատյանի նախասիրությունը գիտության մեջ հայոց ավանդութային ընտանեկան ծիսակարգն էր, հատկապես դրա հնամենի շերտերը։ «Պաշտամունքային մոտիվները հայոց ընտանեկան ծիսակարգում» աշխատության մեջ, ուր ի մի են բերված ժողովրդական հավատալիքների և ծեսերի վերաբերյալ եղած ու իր հավաքած դաշտային նյութերը, նա ընտանեկան ծիսակարգը ներկայացնում է որպես ինքնաբավ գործող մի համակարգ։ Դրա հետ մեկտեղ ազգագրագետը փորձ է անում վերականգնել նաև այդ հավատալիքների զարգացման փուլերը, փոխակերպման մեխանիզմները, դրանց կենցաղավարման համահայկական ընույթը և տեղական առանձնահատկությունները։ Քանի որ ընտանեկան ծեսերի մի զգալի մասը կապված էր տան օջախի հետ, հեղինակը հատուկ ուշադրություն է դարձրել այդ հարցին և բազմազան ու տարաժամանակյա նյութի կառուցվածքային մանրամասն դիտարկումով ցույց տվել, թե ինչպես է օջախի գաղափարը ներառնվում ընտանիքի համակարգում, դառնում ազգային աշխարհընկալման հիմքերից մեկը։

Հարսանիքի, ծնունդ-կնունքի և թաղման սովորույթները կենսընթացի ծիսականորեն ա-

---

1 Տե՛ս Հայ ազգագրություն և բանահյուսություն, պր. 17, Երևան, 1989, էջ 5—62։

մենահագեցված հանգույցներն են, ուստի և բնական է, որ աշխատության մեջ մեծ տեղ է հատկացված դրանց քննությանը։ Ուշագրավ է, որ դրքում ընտանեկան ծիսակարգը քննվում է հենց վերոհիշյալ հաջորդականությամբ, այսինքն, սկիզբը պատկերացվում է ոչ թե որպես ծնունդ (ինչը բնորոշ է առանձին անհատին), այլ՝ հարսանիք (ինչը բնորոշ է հասարակությանը)։ Եվ պատահական չէ, որ Զ. Խառատյանի վերջին տարիների գիտական հետաքրքրությունները բևեռված էին հենց հարսանիքին։ Ընդ որում, դատելով նրա մի շարք հրապարակումներից[2], հարսանիքը գիտվում է ոչ միայն իբրև ազգագրական իրողություն՝ դրա դասական բնորոշմամբ, այլ մի երևույթ, որը ներառել է մարդու, հասարակության և տիեզերքի մասին ժողովրդի ամփոփ ընկալումը։ Այսպես, հարսանիքի համակարգում բացահայտվում են տիեզերական առաջին զոհի գաղափարը, ճանապարհի և անցման խորհրդանիշները, հնամենի ընդհանրական փոխանակման հետքերը։ Այսպիսով, Զ. Խառատյանի ուսումնասիրություններում հարսանիքը միտում էր դառնալ բանալի, որի օգնությամբ հնարավոր կլիներ ոչ միայն բացահայտել ազգային մշակույթի անմեկնելի թվացող կողմերը, այլև նորովի մեկնաբանել, թվում է, վաղուց հայտնի և պարզաբանված իրողությունները։ Ցավոք, գիտնականը չհասցրեց ավարտել հարսանիքին նվիրված իր մյուս կարևոր ձեռնարկումը՝ հայոց դիվրանային համակարգի վերականգնումը։ Թե ինչպիսին պիտի լիներ այդ համակարգը, կարելի է դատել, օրինակ, նրա «Հայերի ավանդութային դիվաբանական պատկերացումները» հոդվածից[3]։

Զ. Խառատյանը թողել է նաև հարուստ գիտահրապարակախոսական ժառանգություն։ Ընդամենը վերջին երեք տարվա ընթացքում հանրապետության զանազան պարբերականներում հրատարակված նրա հոդվածների թիվն անցնում է երեք տասնյակից։ Այդ հրապարակումները վերաբերում են ազգային կյանքի այժմեական տարբեր հարցերին՝ Արցախ, փախստականություն, Ղարաբաղյան շարժում, տոնածիսական կյանք, ազգային ինքնություն և հոգերանություն[4]։ Տարբեր է և դրանց ժանրային բնույթը. զուտ գիտական վերլուծությունից մինչև բարոյախոսություն և հումոր։ Այս բազմազանությունն ունի, սակայն, մի միավորիչ հատկություն. հանգես գալ որպես իրազեկ մասնագետ, ցանկացած երևույթի մեջ քննել նրա այն եզրը, այն երանգը, որը կարող է բացահայտել միայն ազգաբանը։ Ազգաբան, որը ոչ միայն ակադեմիական դրույթներ է հիմնավորում, այլ նաև անկեղծորեն բացահայտվում է՝ ներկայացնելով և իր անձնական հայացքը, հուզականությունը, մտավախությունն ու մտատանջությունը։

---

2 Տե՛ս, օրինակ, Ամուսնական զույգ նշող հայերեն տերմիններն իբրև ընդհանրական փոխանակության արտացոլում (Հայերենագիտական միջազգային երկրորդ գիտաժողովի զեկուցումների գրույթներ, Երևան, 1987), Обычай hle ktrel и символика пути в армянской свадьбе (Հայ ժողովրդական մշակույթի հետազոտման հարցեր. Երիտասարդ գիտնականների 8-րդ կոնֆերանս, զեկուցումների գրույթներ, Երևան, 1988), Ամուսնական զույգի ուղին հայոց հարսանիքում (ՀՀ ԳԱ Լրարեր հասարակական գիտությունների, 1989, № 11), «Եղն մորթելու» սովորույթը և փեսան հայոց հարսանիքում (նույն տեղում, 1991, № 2), «Берущие» и «дающие» (армянские обозначения брачной пары в фольклорно-этнографическом контексте) (Историко-этнографические исследования по фольклору. Сборник статей памяти С. А. Токарева, М., Наука в печати).

3 Традиционные демонологические представления армян (по материалам семейного быта XIX-начала вв.) (Советская этнография, 1980, № 2); Traditional demonological notions of the Armenians (Soviet Antropology and Archelogy. 1981, vol. 20 № 2 (Armonk, NY).

4 Տե՛ս, օրինակ, Ազգային հարցը՝ ազգագրության հայելիում (Ավանգարդ, 31. VI. 1989), Մինչև ե՞րբ պիտի անտեսվի մասնագետի կարծիքը (Ավանգարդ, 27. XII. 1989), Ներկան անցյալի ուրվականն է (Խորհրդային Հայաստան, 21. I. 1990), Мысли по поводу ситуации в Азербайджане и Армении: январь 1990 г. (համահեղինակությամբ), (Литературная Армения, 1990, № 4), Զգուշանալ սեփական պատմությունից (Հայաստանի հանրապետություն, 31. X. 1990), Գիտակցված չարիքը կես չարիք է (նույն տեղում, 17. XI. 1990), Ընդունվելիք տոնացույցի մասին (ազգագրագետի նկատառումներ) (նույն տեղում, 22. XII. 1990), էթնիկական բումերանգ (Գոյամարտ, № 8, 1991), Ազգ, մշակույթ, պետություն (մտքեր խորհրդարանին՝ խորհրդածելու) (Հայք, 13. XI. 1991)։

Հոդվածների այս շարքում առանձնակի տեղ է դրվում փախստականության հիմնահարցի քննությունը։ Փաստորեն Զ. Խառատյանն առաջիններից էր, որ փախստականությունը դիտարկում էր որպես ազգագրական հետազոտության օբյեկտ՝ իր ներքինիկ և սոցիալական բազմաթիվ առանձնահատկություններով, պահվածքի յուրօրինակ մեխանիզմով, հոգեբանական դիմագծով և այլն, ինչի իմացությունը միա՛յն կարող է հնարավորություն ստեղծել նորեկ բնակչության հարմարվելու գործընթացի որոշակի ծրագրերի մշակման և իրագործման համար։

Ինչպես կարելի է դատել մի շարք հոդվածներից, ազգի այսօրվա օրհասական վիճակը նրան առաջադրում էր մի կարևորագույն խնդիր. ո՞րն է հայ հանրույթի լինելության դաղտնիքը, ի՞նչ մեխանիզմներ էին գործում, որոնք դարեր շարունակ ապահովում էին ազգի ֆիզիկական և, որ կարևոր է, բարոյահոգեբանական հարատևությունը, և ինչպե՞ս կարելի է վերագործարկել ավանդական այդ մեխանիզմները (օրինակ, արտաքին գործոններին ոչ թե միագծորեն, այլ ճկունորեն հակադրվելու կարողություն, ավանդութային կեցվածքի՝ այդ թվում և տոնական կյանքի վերագտնում և նորովի օգտագործում)։

Զ. Խառատյանի բազմաբնույթ հոդվածները կոչված էին կատարելու և մի այլ, ոչ պակաս կարևոր դեր. գրանցում նա տագնապում էր, որ «ոչ գիտակ միշամտությունն ու վերաբերմունքը կարող է առմիշտ խեղել ժողովրդական միտքն ու ոգին»7, ուստի փորձում էր փոխարինել այդ «միշամտությունը» ազգային-մշակութային երևույթների մասնագիտական դիտարկումով ու մատուցմամբ։ Նույն նպատակն էր հետապնդում նաև իր հիմնադրած «Ազգապատում» հեռուստաշարը, որ նա վարում էր մեծ ոգևորությամբ ու հավատով։

Երևանի պետական համալսարանում դասավանդելիս նա հաճախ էր շեշտում, որ վերջին տարիներին մեղանում ազգագրությունը դառնում է հասարակության կյանքին անմիջապես արձագանքող գիտություն, և ազգագրագետի վրա ընկնում է մի նոր պատասխանատվություն՝ պահպանել ազգային և համամարդկային արժեքներն այն պահին, երբ ամեն ինչ փլվում է։ Գիտական և հասարակական իր գործունեությամբ Զ. Խառատյանը այդ պատասխանատվությունը խորապես գիտակցող գիտնականի և հայ մարդու մարմնավորում էր։

Լ. Հ. ԱՐԲԱՀԱՄՅԱՆ
Հ. Տ. ՄԱՐՈՒԹՅԱՆ
Հ. Լ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածուներ

Զսվեն Վանեի Խառայանը «Լրաբեր հասարակական գիտությունների» ամսագրի ոչ միայն աղանդավոր ու ճանաչված ճեղինակն էր, այլև նրա ջերմ և ազնվասիրտ բարեկամը։ Հիրավի, ամսագրի խմբագրության աշխատակիցները կրկնակի վիշտ են ապրում՝ ականավոր գիտնականի. բաղմացու և անմոռաց ընկերոջ վաղաժամ կորստյան համար։

---

5 Տե՛ս, օրինակ, Հայացք փախստականության պրոբլեմին (Խորհրդային Հայաստան, 19. IX. 1989, Հ. Առաքելյանի հեղինակցությամբ), Առանց սխալվելու իրավունքի (փախստականությունը՝ ազգագրագետի հայացքով) (Խորհրդային Հայաստան, 14. X. 1989), Հնարավո՞ր է պահպանել փախստականների համայնքները (Հայաստանի Հանրապետություն, 6. XI. 1991), Բռնագաղթվածները (Հայրենիքի ձայն, 13. II. 1990)։

6 Տե՛ս, օրինակ, «Փյունի՞կ» թե՞ «Սիզիֆի աշխատանք» (Ավանգարդ, 28. II. 1990), Ծա՞ռ թե՞ եղեգն (Հայք, 22. V. 1991), Ոչ միայն հացիվ (Հայաստանի Հանրապետություն, 24. I. 1992)։

7 Ժառանգություն և ժառանգորդ (ազգագրագետի խոհեր) (Մշակույթ, 1990, № 1, էջ 54)։